

Տ. ՄԻՈՆ ԵՂԻՄԿՈՂՈՍ ԱՂԱՄՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ՔԱՆԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*«Օրինակ լինիջիր հաւաքացելոց, բանիւք,
գնացիւք, սիրով, հաւաքովք, սրբութեամբ»:
«Օրինակ եղիր հաւաքացյալներին խոսքով,
վարմունքով, սիրով, հաւաքով, մաքրութեամբ»:
(Ա ՏԻՄ. Դ 12)*

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի հավաքավոր որդիք մեր Ս. Եկեղեցու.

Այսօր, այս սրբազան պահին, մեր հոգին ու միտքը հրճվում է այն զգացումից, որ մեր անարժանիս ձեռքով անդրանիկ ձեռնադրությունը Գեղի ունեցավ, որով քահանայական օծմանը արժանացան ութ սարկավագներ:

Այսօր, երբ մեր Եկեղեցու ու ժողովրդի առջև բազում խնդիրներ են ծառացել, հոգևորականի համար գլխավորը հավաքը, իմացությունը, բարոյականը և մաքուր ու անբասիր վարքն է: Հոգևորականն այսօր առավել պիտի քաջարեղյակ լինի Ս. Գրքին՝ Աստվածաշնչին, ինչպես նաև հեղինակ ժամանակակից գիտություններին, որովհետև նրա ծառայության ասպարեզն է՝ խրատել, ուսուցանել, բարության կոչել, չարից հեռու պահել մարդկանց: Այլապես քահանայի բանիմաց չլինելը աղեկալի կլինի ոչ միայն իր, այլ նաև իրեն վստահված հոգի ու համայնքի համար:

Քահանան Ամենակալ Տիրոջ պարգամաբերն է: Ուստի պարգամաբերի վարք պիտի ունենա: Աստծո ծառա ու սպասավոր անվանվելը մեծ պարիկ է, որքան ավելի բարձր պարիկ է՝ Ամենակալ Տիրոջ պարգամաբեր կոչվելը, որ ոչ միայն սպասավորություն է պարփակում իր մեջ, այլև միջնորդության պաշտոն, որովհետև քահանան Աստծո և մարդկանց միջև միջնորդ է: Քահանան աստվածաբնական անձ է, եթե միայն Աստծուն է հապուկ մեղքեր քավելը, նույնն անում է նաև քահանան՝ Սուրբ կարգի զորությամբ՝ Աստծո խոսքի համաձայն (Հովհ. Ի 23):

Ձեռնադրությամբ քահանան ոչ միայն նոր կյանքի, նոր ծառայության է լծվում, այլև իրեն փրկում է հոգևոր իշխանության ասփնճան, որով նա դառնում է մատակարար Եկեղեցու Սուրբ Խորհուրդների, իրավունք ստանում միջնամուխ լինել իրեն վստահված հոգի կենսական խնդիրներին: Ոչ միայն իր, այլ նաև Աստծո կողմից կոչված քահանան, որ գիտի իր պաշտոնի բոլոր կողմերը, հավաքացյալների համար ամենից մեծ բարերարն է այս աշխարհում:

Քահանան է, որ, Ս. Ավագանի մկրտությամբ, լույս կյանքի է առաջնորդում քրիստոնյային, քահանան է մխիթարում նրան փառապանքների մեջ, քահանան քրիստոնյայի ամուսնական միությունն է վավերացնում իր օրհնությամբ, քահանան հանդարտեցնում է խռոված սրտերն ու շփոթված մտքերը, քահանան զորացնում է հավաքացյալին բարոյական կյանքի մեջ և Ավետարանի պարսկաբաններով կրթում է իրեն վստահված հոգին:

Ինչպես Ազգիս Վեհափառ հայրապետն է ասել՝ «Ժողովուրդը պետք ունի սպասավորի, սակայն այնպիսի սպասավորի, որը գիտի դարման անել նրա կարիքներին, նրա ցավերին, նրա փառապանքներին: Ժողովուրդը պետք ունի սպասավորի, որը գիտե առաջնորդ լինել անհուսության և անորոշությունների մեջ՝ դուրս բերելով լուսավոր ճանապարհներ, հույսի ճանապարհի վրա կանգնեցնելով մեր ժողովրդի զավակաց»:

Միրելի նորած եղբայրներ, քանի որ արժանի դարձաք ձեր անձերը երկնային գործին նվիրելու, թույլ մի փվեք, որ ինչ-ինչ պարճառներով արափավորվի ձեր պաշտոնը՝ ըստ Պետրոս առաքյալի խրատի (Կորնթ. Զ 3), այլ արիաբար և հոժարակամ, առանց ծուլության, անթերի ու մաքուր հոգով, սուրբ սրտով, անարար հավաքքով կատարեցեք ձեր պարտականությունները:

Միրելի նորած հոգևոր եղբայրներ, քաջ գիտակցեք, որ քահանայության ձեր կոչումը մարդկանցից չէ, ոչ էլ մարդու միջոցով է, այլ Նրանից է, որ քահանա կոչվեց ըստ կարգի Մելքիսեդեկի, որ է մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Միրելի նորած հոգևոր եղբայրներ, պարտաստ եղեք՝ անվերապահ հնազանդությանմբ կատարելու ձեր հոգևոր ծառայությունը, որտեղ և լինեք, աներկյուղ ու անփրկություն, պայծառացնելու մեր Ս. Եկեղեցին, մեր ժողովրդին, որին ծառայելու ծանր բեռը և պարփվը մեզ ի վերուստ է փրվում:

Ներենք Վեհափառ Հայրապետի՝ հոգևորականներին ուղղված հեղինակալ պարգահին. «Եկեղեցու այժմյան առաջնահերթ խնդիրը հոգևոր զգացումը վայելելու կերպով հայ ընդանիքից ներս փարածելն է, Եկեղեցական փոնացույցը ժողովրդական կյանքի հետ համախառնելը, որպեսզի Եկեղեցու օրհնությունն ամեն պահի իր զավակաց հետ լինի»:

Շնորհազարդ Վեհափառ Տեր, շնորհավորում ենք Ձեզ, քանզի Ձերդ Սրբության ամենօրյա հոգածությունն է հոգևոր նոր սերնդի պարտաստությունը:

Մեր շնորհավորանքներն ու շնորհակալությունները մեր նորած եղբայրների ծնողներին, որ իրենց զավակներին հասցրել են ընծայումի ազգի մշտական զոհասեղանին, մեր զույգ Ճեմարանների դասախոսներին, որոնք իրենց անմնացորդ նվիրումով պարտաստել են հունդեր՝ ժողովրդի ծոցում ամփոփելու և այնտեղ բազմափայլ հասկեր դառնալու համար:

Շնորհավորում ենք և Մայր Աթոռի միաբանությանը, որի մշտական հոգածության ներքո դասփարակվել և ներշնչվել է ներկա սերունդը:

Միրելի նորած եղբայրներ, քահանայություն անարար, ընդիր, սեփական, ահա հիմքը, ահա կնիքը այդ պաշտոնի: Հայ Եկեղեցու փառքն ու բարեկարգությունն է այսպիսի քահանայությունը, որին կարող ենք վստահել:

Խաղաղության, սէր, շնորհ և ողորմության Տեսուն մերոյ և Փրկչի Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեւեկանս. ամէն:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նորած երկու կուսակրոն քահանաների՝ Տ. Պսակի և Տ. Գաբրիելի վեղարի փվչության և արեղայի օրհնության կարգը:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՍՐԿ. ՆԱՎԱՍԱՐԴԵԱՆ